

Այս ըսողները տգէտ եւ յանդուգն բողոքական (փրօթէսթան) մարդիկ են, արդեօք մեր տգէտ եւ յանդուգն *կրիսիկոս*ն եւս ինոցանէ է... Եթէ այնպէս է, մենք իրեն հետ բան չունիմք, եւ ոչ նա մեզի հետ: Պօլսոյ բողոքական *Աւեսաքերին* աչքը լոյս, որ առանց թերեւս գիտնալու՝ իրեն համախոհ գործակից մը աւելի ունի Ռուսաստանի մէկ անկիւնը, թէպէտ եւ շատ խեղճ գործակից. բարով վայելէ: Մխիթարեանց ալ աչքը լոյս, որ Գաբրիէլ Վարդապետին քրիստոնէականը քննող ու անոր չհաւնող *կրիսիկոս* մը գտան՝ Խապառաճեան իմաստակին նման, լուսաւորչական Հայոց մէջ. բարով վայելեն:

Բայց մէք դարձեալ այս կարծեաց վրայ եմք թէ ճշմարիտ լուսաւորչական Հայը պէտք է աւելի ուրախանայ ասոր՝ որ այն քրիստոնէականը ոչ բողոքականաց հաճոյ եղաւ եւ ոչ պապականաց. յայտնի ապացոյց՝ որ նոցա մոլոր սկզբունքները համարձակ կբանդէ, եւ Հայ-

աստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնները կհաստատէ, ինչպէս որ ճանչցան եւ վրկայեցին Կոստանդնուպօլսոյ սրբազան Պատրիարքը եւ իրեն հոգեւորական ժողովը: Իսկ մեր իմաստակ *կրիսիկոսին* այն քրիստոնէականին հաւնիլը կամ չհաւնիլը մէք այն ատեն բանի տեղ կղենմք՝ երբոր ցուցնէ մեզի թէ ինքը կոնդակ եւ իշխանութիւն առեր է Վեհափառ Կաթողիկոսէն եւ էջմիածնայ սիւնհոդոսէն՝ ազգիս մէջ ելած եւ ելլելու աստուածաբանական գրուածոց քննութիւն ընելու եւ վճիռ տալու, *քերես* առ իշգոյէ իրեն չափ իմաստուն վարդապետի կամ եպիսկոպոսի եւ Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքները ջատագովող պաշտպանի:

Մինչեւ որ ինքը այս պաշտօնն իրօք առած լինելը ցուցնէ մեզի՝ մէք դառնամք մեր խնդրոյն, եւ յաջորդ յողումին մէջ տեսնեմք թէ *Կարոյիկոսին Մխիթարեանց* ըսելով ինչ կիմանամք:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑԻՑ

Սարտենիոյ զօրքերուն Նափոյի մտնելովը բոլոր Եւրոպան շարժ ելաւ: Քանի որ Խալիոյ հարաւային կողմերը բան տեսնողը միայն Կարիպատին էր, եւ Սարտենիոյ տերութիւնը ոչ խօսքով եւ ոչ գործով Խալիոյ մէջ պատանած դիպուածներուն կխառնուէր, Եւրոպայի տերութիւնները յայտնապէս չէին ըսել իրենց կարծիքը: Բայց երբոր Սարտենիան այժմու դիւանագիտական կանոններուն մոտիկ չընկելով՝ յայտնապէս ելաւ միաբանեցաւ Կարիպատեանց հետ, եւ Խալական յեղափոխութեան ամեն գլխաւոր բեւերը ձեռք առաւ, իսկոյն Եւրոպայի միւս տերութեանց բերանները բացուեցաւ վրան, եւ սկսան ըսել քե Սարտենիան այս գործովը այժմու Եւրոպական ազգաց մէջ գտնուած դաշնադրութիւններն աւրեց, իրաւունքները ոտքի տակ առաւ, եւ Նափոյի բազաւորը Ֆրանչիսկոս Բ, իրաւունք ունի (ըսին) անոր դէմ բողոքելու:

Քափուր կոմսը, որ Սարտենիոյ քաղաքականութեանը կառավարողը կհամարուի, ծերակուտին մէջ նշանաւոր ճառ մը խօսելով, ուրիշ բաներուն հետ այս ալ ըսաւ համարձակ. « Զիս կմեղադրեն որ յեղափոխութեան պաշտպան կեցեր եմ, ես որ միշտ կոխ ըրած եմ յեղափոխութեան դէմ: Հռոմի ու Նափոյի մէջ պատահած բաները՝ դիւանագիտութեան մէջ ընդունուած կանոններով դատել կաւրելի չէ... Նափոյի բազաւորը ինքն ալ խոստովանեցաւ իւր տկարութիւնը՝ երբոր առանց պատերազմելու ձգեց ելաւ մայրաքաղաքէն. անոր կառավարութիւնը մեռաւ բարոյապէս... Կարելի է քե մեր գործողութիւնները խիստ իրաւացի մը չեն. բայց յոսամք քե Եւրոպայի կարծիքը մեզի դէմ չեկնէ: »

Յիրաւի ալ բանը այն աստիճանի հասաւ. Խալիոյ մէջ որ Սարտենիան կամ ազգային շարժման դէմ պիտի կենար, եւ անով բոլոր Խալիան իրեն դէմ պիտի հանէր, եւ կամ ազգին գլուխը պիտի անցնէր, ու պիտի առաջնորդէր անոր մեծ նպատակին հասնելու, որ էր Խալիոյ միութիւնը: Սարտենիան հարկաւ այս երկրորդը պիտի ընտրէր, եւ Քափուր յայտնապէս ըսաւ իւր ճառին մէջ. « Մեր ջանքն ու աշխատութիւնը այս է որ Հռոմը մայրաքաղաք ընեմք Խալիոյ բազաւորութեանը: »

Սարտենիան այսպէս համարձակ ոչ կխօսէր եւ ոչ կըրգորէր՝ քե որ չգիտնար քե Գաղղիան ու Անգղիան կհանին իւր բռնած ճամբուն: Կերենայ քե հիւսիսային տերութիւններն ալ միտք չունին Սարտենիոյ դէմ ելլելու, եւ ոչ իսկ Գերմանիան. բայց Աւստրիան հարկաւ առիթ կնայի որ իւր վրէժը առնու Սարտենիայէն՝ երէ կարենայ:

Աւստրիան մեծ ջանք ունէր, կրսեն, որ Ռուսաց տերութիւնը իրեն հետ համաձայնեցնէ Խալիոյ խնդրոյն մէջ, եւ յոյսը Վարշաւի տեսաւորութեան վրայ էր: ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍՐԷ հասաւ Վարշաւ. հոկտեմբերի 8-ին, երկրորդ օրն ալ Աւստրիոյ կայսրը եւ Բրուսիոյ խնամակալ իշխանը: Հոկտեմբերի 14-ին տեսաւորութիւնը վերջացաւ, բայց ինչ բանի վրայ որոշմունք եղածը յայտնի չէ, քեպէտ եւ կրկարծուի քե Խալիոյ գործողութեանց վրայ անշուշտ խօսք եղած է երեք բազաւորներուն մէջ:

Սարտենիոյ բազաւորը Վիկտոր-Էմմանուէլ մտաւ Նափոյի նոյեմբերի 7-ին: — Նափոյի բազաւորը Կայերա տնրոցը քաշուած՝ հոն պաշարուէր Ե Սարտենիոյ զօրքերէն: Այժմ Նափոյի տերութեան մէջ 55,000 զօրք ունի Սարտենիան: